



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«17» հոկտեմբերի, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 1449-Ա/2

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ի դրույթներով և հիմք ընդունելով «Գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթին ներկայացված հայտերի գնահատման մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի հոկտեմբերի 16-ի N 2 արձանագրությունը և 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների նոր գիտական թեմաների, այդ թվում՝ թիրախային (նպատակային) գիտական թեմաների ֆինանսավորում» ծախսային ուղղությամբ նախատեսված ծավալները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանին՝
 - ա) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքները,
 - բ) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

գ) Ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2020 թվականի հոկտեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

Նախարար

Արայիկ Հարությունյան

**ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
 ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ**

ՑԱՆԿ

Հ/հ	Ծածկագիր	Թեմայի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	20TTSG-1F001	Քարաքոսերի բազմազանության հետազոտումը և պահպանությունը Հայաստանում	Գասպարյան Արսեն Հակոբի	ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
2	20TTSG-2E003	Բամբուկանման հիերարխիկ միկրոկառուցվածքով սիլիցիումի և բորի կարբիդների ստացումն այրման ռեժիմում՝ ռեակցիաների ջերմակինետիկական զուգորդման մոտեցմամբ	Այդինյան Սոֆիյա Վարդգեսի	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
3	20TTSG-1F004	Հակաքաղցկեղային թերապիայում բուսական ծագման և քիմիաթերապևտիկ միացությունների համակցումների կենսաքիմիական և իմունաբանական ուսումնասիրությունները	Ավթանդիլյան Նիկոլայ Վլադիմիրի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
4	20TTSG-1C006	Ա. Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիայի արագացուցչային սարքավորումների վրա հիմնված ցածր էներգիաների միջուկային ֆիզիկայի խնդիրների լուծման համար լաբորատորիայի ստեղծում	Գյուրջինյան Արմեն Վարդանի	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ

5	20TTSG-1F007	Լայն սպեկտրի նոր հակավիրուսային միացությունների հայտնաբերում	Զաքարյան Հովակիմ Սարգսի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
6	20TTSG-1C008	Հեղուկ բյուրեղային խորը նեյրոնային կառուցվածքներ (ՀԲ-ԽՆԿ)	Ռաֆայելյան Մուշեղ Սպարտակի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
7	20TTSG-2F010	Նոր պինդ մարմնային էլեկտրոլիտների հաշվարկային որոնում	Զաքարյան Հայկ Աշոտի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
8	20TTSG-1D011	Իոնական հեղուկների մշակում և կիրառություններ քիմիայում	Հարությունյան Արփինե Սաշայի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ